№ 43 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 24 ՀՈԿՏ. ԱՌԱՋԻՆ 1918 ՏԱՐԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ, 24 ՀՈԿՏ. № 43

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՕՐԳԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԲԱՑԱՌԱՆԹ Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ" օրաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

1 ամիսը . . . . . 8 ռ. | 3 ամիսը . . . . . 21 ռ.
2 ամիսը . . . . . 15 ռ. | 4 ամիսը . . . . . 25 ռ.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 50 ԿՈՊ.

Խմբագրութիւնը բաց է ասեն or (բացի կիրակի եւ տօն օրերից) առաւօտեան ժամը 9—2-ը, իսկ գրասենեակը նաեւ երեկ. ժ. 6—8։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ

ՏՈՂԱՏԵՂԻՆ՝

Առաջին երեսի վրայ . . . . . 50 կոպ.
Վերջին երեսի վրայ . . . . . 30 կոպ.

Հասցէն՝ Тифлисъ, Головинскій просп. № 25. Tiflis, Redaction du journal «Jogovrdi Dzain». Телефонъ 10—39.

ՄՇԱԿԻ, ԱՂԲԻՒՐԻ, ՏԱՐԱԶԻ խմբագրութիւնները խորին վշտով զուժում են իրենց հինաւուրց աշխատակցի՝

ԲԺՇԿԱՊԵՏ

Գրիգոր Տէր-Գրիգորեանցի

մահը, որ կարճատեւ հիւանդութիւնից յետոյ, տեղի ունեցաւ Եբէկ, հոկտ. 23-ին։ Հանդիսաւոր հոգեհանգիստը այսօր, հինգշաբթի, երեկ. ժ. 7-ին Գրական-Գեղագիտական Սալոնում։ Թաղումը վաղը, ուրբաթ, կէսօրուայ ժ. 12-ին Վերայի գերեզմանատունը։

Բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեանցի այրին սիրեկ. Կլոտիլդա Տէր-Գրիգորեանը խորին վշտով յայտնում է ազգականներին, ընկերակիցներին, բարեկամներին, որ չորեքշաբթի, հոկտ. 23-ին առաւօտեան կարճատեւ հիւանդութիւնից յետոյ խաղաղ հոգին աւանդեց Գանձակի, Կարսի նահանգների գլխաւոր բժիշկ «ՄՇԱԿԻ», «ԱՂԲԻՒՐԻ», «ՏԱՐԱԶԻ» հինաւուրց վաստակաւոր աշխատակից՝

ԲԺՇԿԱՊԵՏ

Գրիգոր Տէր-Գրիգորեանց

Հոգեհանգիստը այսօր, հինգշաբթի երեկ. 7 ժ. Գրական-Գեղագիտական Սալոնում, Թաղումը վաղը ուրբաթ, Վերայի գերեզմանատունը ցերեկ. 12 ժ. Նոյն եկեղեցում և պատարագը։

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ. ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ. ԴԱՀԼԻՃ

Շաբաթ, հոկտ. 26-ին, երեկ. ժ. 5-ին կայանալու է Հ. Ժ. Կ.

ԱԹԱԿԵՐՏԱԿԱՆ

Ֆրակցիայի 2-րդ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ՕՐԱԿԱՐԳՆ Է՝—1) Գործադիր կոմիտէի զեկուցումը,
2) Ընթերցում և հաստատում կանոնադրութեան.
3) Զեկուցում ապագայ գործունէութեան մասին.
4) Նոր քնարութիւններ
5) Ընթացիկ հարցեր.

1) Ծանօր.—Կարող են ժողովին ներկայ լինել և ֆրակցիային համակրողները։ 3—1

Թիֆլիս, 24 հոկտեմբերի

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

—

Անցեալ անգամ, խօսելով Անդրկովկասեան ժողովուրդների փոխյարաբերութիւնների մասին յեղափոխութեան ընթացքում, մենք շեշտեցինք, որ ընդհանրապէս դասակարգային կռուի քարոզը, որ անում էին զեկավար կուսակցութիւնները, ոչ թէ չստեղծեց ազգերի համերաշխութիւնը, այլ, ընդհակառակը, սանձարձակ անելով խաւար մասսաների տարրական եսականութիւնը, անբարոյականացրեց ժողովուրդը և դուռը բացեց ցեղային ամենաստոր բնազդների։

Մեզ, հայերիս համար, այդ հանգամանքը ունեցաւ, ինչպէս այժմ պարզ է ամենքի համար, ճակատագրական և կատաստրոֆային հետեւանքներ։ Եւ եթէ մենք կամենում ենք չկրկնել մեր հին սխալները, ուստի մեր հասարակութեան քաղաքականապէս դիտակից տարրերի վրայ մի մեծ պարտք է ծանրանում գտնել մեր նախկին սխալների արմատը և օգնել ժողովրդին այդ արմատը հեռացնել մեր կեանքից։

Վերջին տարիների մեր վարած քաղաքականութիւնը ընթացել է դասակարգային պայքարի դրօշակի տակ, որ ընդգրկել է զեկավար կոչուած կուսակցութիւնը, — Յեղափոխական Դաշնակցութիւնը։ Մեր ցաւը եղել է [illegible] ազգամանքը, որ այդ [illegible] քաղաքական խմբակցութիւնը դաւանել է և տարածել ժողովրդի մէջ յիշած ծայրայեղ և անպատասխանատու լոզունգները։

Հայ ժողովրդի համար դա եղել է աւելի ծանր, քան ուրիշ ժողովուրդների համար, որովհետեւ, մեկուսացնելով մեր ազգը, այդ ծայրայեղ հոսանքը միևնոյն ժամանակ ստեղծել է ժողովրդի մէջ հակապետական հակումներ և վերջնականապէս նրան լքել։ Չէ որ մեր «զեկավար» կուսակցութիւնից դաւանած ուսմունքի ծայրայեղ դասակարգային և ինտերնացիոնալիստական սոցիալիզմի սրբութիւն սրբոցն է կազմում այն հայրենազրկումը, թէ պետութիւնը բուրժուական հիմնաբկութիւն է, և իսկական ժողովրդասէր քաղաքականութիւնը նպանում է կայանում, որ այդ հիմնաբկութիւնը նրա բոլոր օրգանների հետ միասին տապալել բոլոր երկրներում՝ բանուորութիւնը բաժանող սահմանները ոչնչացնելու համար։

Քանի որ դոյութիւն ունէր Ռուսաստանը, դեռ չէր զգացուում այն հանգամանքը, որ Դաշնակցութիւնը գտնուում է մի ողբերգական ներքին հակասութեան մէջ, լինելով հայ բովանդակ ժողովրդի «զեկավարը» և միևնոյն ժամանակ անպատասխանատու և ինտերնացիոնալիստ խմբակցութիւն։ Այն ժամանակ դեռ հայ ժողովուրդը իր բախտը անօրինողը չէր, և «զեկավարել» բառը հասկացուում էր այն օրերին — զեկավարել յեղափոխական կռիւը, որ հենց կազմում էր Դաշնակցութեան գլխաւոր գործը։

Բայց այն օրից սկսած, երբ հայ ազգը իրերի բերմամբ ստիպուած եղաւ ազգովին կազմակերպուել՝ իր գոյութիւնը և կուլտուրան պահպանելու համար, երբ մեր ժողովրդի առաջ հեռանքը հրամայօրէն դրեց պահանջ՝ հին ռուսական հիմնաբկութիւնների տեղը ինքնուրոյն կերպով ստեղծել նոր պետական կազմակերպութիւն, այն օրից շատերի համար պարզ էր, որ հայութիւնը կանգնած է կատաստրոֆայի առաջ, քանի որ նրա զեկավարները որոշակի կերպով ժիտում են պետականութեան սկզբունքները։

Ամենատարրական ակսիոմա է, որ և պատերազմը վարել և միջազգային կապեր ստեղծելը, դիւանագիտութիւն վարելը կարող է միայն պետութիւնը և նրա պատասխանատու օրգանը, —կառավարութիւնը։ Այդ գործը չի կարող վարել այնպիսի մի կազմակերպութիւն, որը պետութիւնը համարում է միջոց ժողովուրդը ստրկութեան մէջ պահելու համար, իսկ պատերազմը (և դիւանագիտութիւնը)՝ բուրժուազիայի ամենագլխաւոր ոճրագործութիւնը։

Մեր առաջի պետական գործը եղաւ հայկական կորպուսի կազմակերպումը, երբ որ պարզուեց, որ տաճկական ֆրոնտի հին ռուս զօրքը լքուած է և անխուսափելիօրէն պիտի կազմալուծուի և թողնի ֆրոնտը։ Եւ Դաշնակցութիւնը, որպէս «զեկավար» կուսակցութիւն, ամենն ջանք գործ դրեց, որ այդ մեծ գործը զարձնի իր մենաշնորհիան։ Նա օգտուեց Հայկական Զինուորական Միութիւնից, որ այդ համազգային գործը վերցնէ իր ձեռքը, քշելով այնտեղից բոլոր այն գործիչներին, որոնք չէին երկրպագում Դաշնակցութեան հայդուկային հերոսներին։

Եւ հետեւանքը եղաւ մեր զօրքի կատարեալ լքումը և կազմալուծումը։ Ինչու այդպէս եղաւ։ Դրա պատասխանը բոլորիս համար պարզ է։ Դաշնակցութիւնը, որպէս անպատասխանատու «դասակարգային-ինտերնացիոնալիստական» կուսակցութիւն, ընդգրկել էր զինուորական - բանուորական խորհուրդների գաղափարը, մասնակցում էր նրա մէջ և իւրացրել էր այդ կազմակերպութիւնների հակապետական անպատասխանատու բոլշևիկական և կիսաբոլշևիկական լոզունգները։ Եւ տարերային կերպով այդ բոլշևիկական տրամադրութիւնը Դաշնակցութիւնը մացրեց մեր ազգային զօրքի մէջ։ Դաշնակցութեան իդէոլոգիայով տարուած «զեկավարները» անխուսափելիօրէն պիտի մացնէին հակապետական ոգին Զինուորական Միութեան, և հենց զօրքի մէջը, ստեղծելով այն երկիշխանութիւնը, որը կաշկանդեց մեր դիւանը հրամանատարութեան գործունէութիւնը։

Բայց դա դեռ բաւական չէ։ Մենք չկարողացանք կուռել, որովհետեւ հակապետական երիտասարդութիւնը չէր կարող ստեղծել զօրք։ Եւ այն ժամանակ նոյն մեր յեղափոխական ինտելիգենցիայի առաջ կեանքը դրեց մի ուրիշ պահանջ՝ կնքել հաշտութիւն և հարեւան պետութիւններին կից կազմակերպել նոր պետութիւն։

Եւ այդ գործն էլ է մեզ մօտ կաղում այն հասարակ պատճառով, որ կառավարութիւնը և դիւանագիտութիւնը բուրժուական նախապաշարմունքներ են այն կառավարութեան իդէոլոգների տեսակէտից, որը այսպիսով համոզմունքներ դաւանելով հանդերձ, հնարաւոր է համարում իր ձեռքին պահել Հայաստանի կառավարութեան դնկը։

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾԻ ՄԻՋՆԱԴԷՊԸ

—

Հայ-վրացական սահմանագծի վրայ տեղի ունեցած միջնադէ-

պը յուզել է մեր և վրաց հասարակութիւնը։

Այդ առթիւ աղէն սկսում է արտայայտուել մամուլը, և ցաւալի կը լինի, եթէ եղած միջնադէպի շուրջն սկսուի կուսակցական և ազգային պայքար։

Վրաց սոցիալ-դեմոկրատիայի օրգան „Борьба“ էթը յարձակւում է իր առաջնորդող յօդուածի մէջ Հայաստանի Կառավարութեան վրայ, համարելով նրան պատասխանատու այդ միջնադէպի համար։

Մենք չենք, որ պիտի պաշտպանենք Հայաստանի այժմեան դաշնակցական կառավարութեանը։ Սակայն, քանի որ դեռ իրողութիւնը պարզուած չէ, մենք կարծում ենք, որ դեռ վաղաժամ է յարձակուել Հայաստանի Կառավարութեան վրայ Կոբեր կայարանի դէպքի համար։ Մենք կուզէինք հաւատալ, որ պ. Քալաշնունու կառավարութիւնը մեղաւոր չէ այդ տխուր գործի մէջ։ Անհրաժեշտ է իսկոյն և եթ նշանակել երկու կողմերի համաձայնութեամբ մի քննիչ յանձնաժողով, որ պարզէր այդ դէպքը։

Իսկ երբ որ քննութիւնը պարզի գործը,—մեղաւոր պաշտօնեաներին պիտի հրաւիրել պատասխանատուութեան և ենթարկել ամենախիստ պատժի։

Բաւական է, որքան մեր ժողովուրդների բաղդի հետ խաղացին և շարունակում են խաղալ զանազան անպատասխանատու մարդիկ։

ՅՈՒԶԻԶ ԴԷՊՔ

(Արամ Տ.-Գրիգորեան և 350,000 ռ.)

Ներկայ մոմենտում մեր ամենակարևոր և ցաւոտ ազգային խնդիրներից մէկը՝ գաղթականութիւնն է։

Այս մասին անընդհատ խօսւում է ժողովներում, հասարակութեան մէջ, գրւում է լրագրերում։

Լսողը, կարդացողը ցնցւում է այն անասելի կոշմար դրութիւնից, որի մէջ գտնւում է հարիւր հազարաւոր հայ գաղթականութիւնը, խորապէս ցաւում է, որ սովից և ցրտից ամեն օր հարիւրաւոր մարդիկ մահանում են։

Ամեն կողմից լսւում է կարեկցութեան ձայն։

Ամենքին զբաղեցնում է մի հոգս, թէ ինչպէս անել, որ գաղթականութեան թշուառ դրութիւնը գէթ մասամբ թեթևանայ և անմեղ զոհերի թիւը նուազի։

Գաղթականութեան օգնութեան գործը ծանրացած էր Գաղթականական Խորհրդի վրայ. նա հրաւիրում է իրեն աշխատակիցներ և աշխատում է հրաւիրել ինտելիգենտ և գաղափարական անձինք, որպէսզի նրանք իրենց պարտականութիւնները կատարեն ոչ թէ իբր սոսկ պաշտօնեաներ, այլ իբր որտացաւ, կարեկից և գիտակից քաղաքացիներ։

Աշխատակիցների թիւն էր մինչև վերջին օրերս և իրաւաբան, սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան անդամ պ. Արամ Տէր-Գրիգորեան։

Նա յայտնի անձնաւորութիւն է, ամեն մի ժողովի կրակոտ ճառախօս. բուրժուազիայի և ոչ սոցիալիստ կուսակցութիւնների հասցէին միշտ շանթեր արձակող. դեմոկրատիայի անունով կուրծքը ծեծելով երդուող և այլն։

Այսպէս էր արտայայտւում նրա դէմքը ճառերի մոմենտում։

Գաղթականական Խորհրդի Գործադիր Մարմինը, հրաւիրով պ. Արամ Տէր-Գրիգորեանին առանձին լիազօրի պաշտօնով և նշանակելով նրան լաւ վարձատրութիւն, յանձնում է նրան Մալկայի շրջանը, ուր կան 40,000 գաղթականներ։ Գործադիր Մարմինը պատուիրել էր նրան հիմնել աննդատու կայաններ, տեղաւորել գաղթականներին գիւղերում, ժողովել և առանձին պահել որբերին, մինչև որբանոցների բացումն, կատարել պարենի գնումներ։

Այդ կարիքների համար նա ստանում է Գաղթականական Խորհրդից 350,000 ռ. կանխիկ գրամ, բացի մթերքները և հիւանդանոցի ծախսերը։

Սակայն տեղումը ժողոված պաշտօնական բնոյթ կրող տեղեկութիւնները պ. Արամ Տէր-Գրիգորեանցի գործունէութեան մասին բացում են մի սոսկալի պատկեր. ինչ ասէք կատարուել է Մալկայի շրջանում, բացի գաղթականութեան օգնութիւնից, մոռացուել է գործի բուն նպատակը. մոռացուել է խեղճ ու կրակ գաղթականութիւնը, այսինքն այն դեմոկրատիան, որի համար միտինգների ճառախօսները հեշտութեամբ խաչուելու պատրաստակամութիւն են ցոյց տալիս խօսքերով։

Եւ ահա՝ պ. Արամ Տէր-Գրիգորեանի մասին ժողոված տեղեկութիւններից նկատւում է, որ նրա վրայ, իբրև գլխաւոր պատասխանատու պաշտօնեայի Մալկայի շրջանի, ընկնում են մի շարք ծանր մեղադրանքներ։

Մենք կանգ կառնենք գլխաւոր կէտերի վրայ։

Գ. Արամ Տէր-Գրիգորեանը մեղադրւում է հետևեալում.

Առաջին՝ որ նա իր ստացած 350,000 ռ. գումարից Մալկայի շրջանի գաղթականների աննդի համար գործադրել է շատ չնչին մասը՝ մօտ 16,000 ռ., թէև յիշեալ գումարը ամբողջովին ծախսուած է։

Երկրորդ՝ որ որբերի վրայ մէկ ամսուայ ընթացքում ծախսուել է 390 ռ., այն ինչ որբերի թիւը հասնում է հազարների, սա պարզ ապացոյց է, որ որբերի մասին հոգատարութիւն չի եղել, որբերը մատնուած են եղել անտէրութեան, և քիչ չէ եղել մահացողների թիւը, մինչև որ նորերս Հայոց Բարեգ. Ընկերութեան միջոցով չբացուեցին որբանոցներ։

Երրորդ՝ որ նա գաղթականական վայրերում ստեղծել է անագին շատ ծառայողների, պաշտօնեաների, որոնց վրայ ծախսւում են արտասովոր մեծ գումարներ, իսկ նրանց կատարած գործը չնչին է եղել, կամ չատնենք համարեա ոչինչ։

Չորրորդ՝ որ նա, օգտուելով Խորհրդի տուած թոյլատրութիւնից՝ ունենալ ժամանակաւոր մի խումբ պահապաններ գաղթականների ապրանքը, դոյքը պաշտպանելու համար, կազմել է բազմամարդ միլիցիա պաշտօնեաներով, որը մինչև օրս էլ մնում է և կլանում է սոսկալի մեծ ծախսեր. իսկ միլիցիայի կատարած գլխաւոր գործն այն է եղել, որ շուքով ուղեկցում էր գիւղից գիւղ պարսն առանձին լիազօրին, ինչպէս այդ անում էին հին պրիստաւներն ու գաւառապետները, կարծելով թէ դրանով բարձրանում է իրենց հեղինակութիւնը ու նշանակութիւնը գիւղացիների աչքում.

Հինգերորդ՝ որ նա, պ. Արամ Տէր-Գրիգորեանը, թէև ունեցել է գաղթականական գումարներ, բայց հացի գնումներ գաղթականների համար համարեա չի կատարել. գաղթականների սովորական կերակուրը եղել է Խորհրդի ուղարկած լոբին, որը գաղթականները կերել են մեծ ժամանակ առանց հացի, աղի և դրանից շատերը հիւանդացել են։

Վեցերորդ՝ որ նա միաժամանակ վարել է և վրաց կառավարութեան պարենաւորման նախարարութեան լիազօրի պաշտօն և վրաց կառավարութեան համար կատարել է հացի գնումներ և հիմնել է շտեմարաններ.

Եօթերորդ՝ որ նա մինչև օրս Գաղթականական Խորհրդին չի ներկայացրել իր ստացած գումարների հաշիւը փաստաթղթերով, թէև նրան դիմել են այդ տեսակ պահանջներով։

Գ. Արամ Տէր-Գրիգորեանը յիշեալ հանգամանքների պատճառով այժմ հեռացուած է պաշտօնից։

Բայց միթէ գրանով գործը կարող է վերջանալ։

Ոչ։

Այս գործը մեծ հասարակական նշանակութիւն ունի և պէտք է լուսաբանուի ամեն կողմից։

Խնդիրը այստեղ նրանում չէ, թէ արդեօք կատարուել է վատնումն փողերի, թէ ոչ, այլ նրանում, թէ ինչպէս պարսն լիազօրի խիղճը թոյլ տուեց քաղցած թողնել գաղթականներին և նրանց աննդի փոխարէն ստեղծել պաշտօններ, կազմել ծառայողների անագին շտատ, հաստատել միլիցիայ և այլն։ Եթէ այդ շտատների մասին նա նոյնիսկ ըստացած լինէր Խորհրդի համաձայնութիւնը, այդ էլ արդարացուցիչ հանգամանք չէ, որովհետև շտատը պէտք է համապատասխանի իսկական օգնութեան չափին։

Ցիրաւի գաղթականական բաժանմունքը այս մասին զեկուցումն կատ Ազգային Խորհրդին և հիմնաւոր քննութիւն կը կատարի տեղն ու տեղը։

Գ. Արամ Տէր-Գրիգորեանն էլ, եթէ ցանկանում է, իբր գործիչ, մաքուր հասնել [illegible] ասպարիզում, իրաւունք [illegible] սուսապիլու քննութիւնից [illegible]։

Սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը չի կարող անտարբեր մնալ. նա էլ պարտաւոր է հրապարակաւ արտայայտել իր վերաբերմունքը, քանի որ պ. Տէր-Գրիգորեանը կուսակցութեան անդամ է։

Դէպքը յուզիչ է։

Հասարակական խիղճը չի կարող հանգստանալ, մինչև որ մեղադրուողը չարդարանայ, կամ չկրի իր արժանի պատիժը գէթ բարոյապէս։

Ergo

ՄԻ ԷՋ ԻՄ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ

Բաղդակցեր

Օրը մեռնում էր։

Մթագնած արևի խաղերի տակ, տխուր ու մոլոր անցնում էի Թիֆլիսի լայն հրապարակներից մէկով...

Վերջին կոպէկներովս գնած լրագրի անշուք էջերը, որոնք զողդողում էին ձեռքերիս մէջ, աբիւն ու արցունք էին հաղորդում հայրենիքից, և այս տխուր լուրերի ծանր ապաւորութեան տակ ճմլուած՝ սիրտս լալիս էր անմխիթար...

Եւ ես ինքնամոռացութեան մատնուած, դանդաղ քայլերս աւելի դանդաղեցնելով, հազիւ քարշ էի գալիս, երբ յիշեցի, որ ես էլ այսօր այստեղ, հայրենակիցներիս բազդակից՝ հաց չունեմ. և ձեռքս տարայ վերջին օրերում այնքան թեթևացած գրպանիս ծանրութիւնը մի անգամ ևս փորձելու, սակայն մխիթար թաշկինակս դուրս եկաւ։

Եւ ուրիշ ոչինչ։

Թերթի վերջին երեսն էի կարդում՝ մօտ էի աւարտում, երբ մէկը, գրեթէ մերկ ու հոլանի մերձեցաւ ինձ.

— Ողորմութիւն արա, աղա...

Մի առանձին արագութեամբ ընդհատեցի ընթերցումս և ամենայն սիրով դիմեցի առաջս ծառացած կենդանի ուրուականին — միջահասակ և միջին տարիքի մի հայ կին էր նա։

Ես շփոթուեցի ու կարմրեցի, որովհետև ուզում էի մի բանով դոնէ նրան օգնած լինէի, բայց ոչինչ չունենալու պատճառով պատասխանեցի.

— Մայրիկ ջան, բաշխիր, փող չունեմ։

Իսկ այդ կենդանի կմախքը, որի աչքերը ինձ ուտում էին, երեսի զեկավարելով «կուշտը քաղցածին մանր կը բրթի» առածով, կրկնեց.

— Խնդէին ջան, ողորմութիւն. մի գրուանքայ հացի փող. երկու օր է քաղցած եմ...

— Մայրիկ ջան,—դարձայ նրան, իմ լացը հազիւ խեղդելով, — ես ինքս այսօր հաց չունեմ, ինքս պարապ, օտար—բազուկի, ոչինչ չունեմ, ոչ ոք չունեմ, անտ լրագիրը, տեսէք ինչ է հաղորդում իմ դրժբախտ հայրենիքից և իմ...

Հազիւ արտասանեցի վերջին խօսքերը, երբ այս ցնցոտիածածկ կմախքը ձեռքերը վեր բարձրացնելով ու հեգնանքի ու անէծքի թոյնով, ասաց.

— Կնա, կնա, Աստուած կորի ձեր հացը։ Մենք Տաճկա-Հայաստանում խանում, ադա չդառանք, ձեր օրին, ձեր փառքին չի հասանք, իսկ դուք հոս, Ռուսաստան, կուտորուեցաք, թալանուեցաք ու աղքատացաք ու մեր դժբախտ օրին հասաք...

— Մայրիկ, լսիր, — աշխատում էի ընդհատել և իրողութիւնը հասկացնել, բայց նա վրայ տուեց.

— Կնա, փառք Աստծոյ, անոր անէծքը ձեզ էլ հասաւ...

Ու սկսեց քայլել։

Ես, որ սառել էի ամբողջ իմ էութեամբս, մնացի կանգնած. աշխատեցի կրկին անգամ կանչել այն մոլորուած բազդակցիս, ու պարզել ամենը, որ ես ոչ մի մեղ չունեմ թէ իրեն և թէ իմ քաղցածութեան մէջ։

— Մայրիկ, — կանչեցի վերջին անգամ, իսկ նա ինձ դարձաւ ու կրակեց.

— Քելէ, զեռունուք դուք...

Ու անցաւ...

Այն «քելէ»-ն այնպիսի սրութեամբ նետուեց իմ ճմլուած սրտի խորքերը, որ թափանցեց ամբողջ իմ առանց այն էլ թուլացած մարմինը։

Ծալեցի լրագիրը, խցկեցի գոտարկ գրպանիս մէջ և յոգնած ոտքերիս այժ տալով, ուղևորուեցի դէպի տուն։

Օ՜, որքան ծանր է, երբ եղբայրը եղբօր դէմ է գինւում, երբ նոյն ազգի մի հատուածը միւսի անկումն է ցանկանում...

Երբ որդին հօրն է յանդիմանում, իսկ մայրը որդուն ապարդիւն կերպով, անգթօրէն անիծում...

Եւ երբ ազգիդ մայրերից, «Քելէ, զարնուքք դուք» կապարեայ գնդակի թէժ վերքեր էք ստանում, զգալով հարազատ ազգիցդ, հարուած ու անէծք, որպէս նոյն անբախտ ազգի մի տառապեալ հատուած...

Զկա՛յ, օ՜, չկայ մի ազգի գոյութեան համար աւելի վատթարագոյն վտանգ և անկում, քան նման փոխադարձ թշնամութիւն...

Գ. Ֆիտուլի

ԿԱՐՍ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՅՈՅՍԵՐԸ

Լրագիրներում ապուած հեռագիրների և յօդուածների հիման վրայ՝ կարսեցի փախստականների երեսին ուրախութեան ժպիտներ են փայլում։ Մասնաւոր ժողովներ, խորհրդակցութիւններ են լինում Կարս վերադառնալու համար։

«Թող գնանք մեր սեփական քայքայուած խրճիթների մէջ մեռնենք, մեր ազգականների մօտ թաղուենք և ոչ անհիւրընկալ Թիֆլիսում, որտեղ սոսկալի գնով են ծախում մեր մեռելի համար մի կտոր հող»։ Կարս գնալը վճռուած հարց է։ Եթէ ճանապարհները բացուի, եթէ ապահովութիւն տրուի, ոչ ոք չի մնայ, բոլորը կը գնան. այնպէս է ժողովրդի տրամադրութիւնը։ Բայց բայի տակ մի շարք հարցեր են ծածկուած, որոնց համար դեռ մի քիչ էլ սպասենք, մինչև կարս վերադառնալը իրականութիւն առնայ։ Արդէն Կարսի հին գործիչները գլուխ են բարձրացնում. ջուրը չտեսած բոլոր են. իրենց համար կառավարիչներ են ջոկում. պաշտօններ են բաժանում։ Դարձեալ ուզում են հրապարակ գալ կոպալով, սարճանակով գործող քեալլապիօղները։ Դարձեալ ուզում են ժողովրդի գլխին նստել այդ թալանչիները, այդ ինքնակոչ փրկիչները, որոնց երեսից Մայր Հայաստանը թաղուեց և բազմաթիւ հայեր անուն-անբուն մնացին օտարի գոնները։ Բայց թող լաւ դիտենան այդ խոլերայի բացիլները, որ այս անգամ չի յաջողուի դրանց ապարէղ մնալ, ժողովրդի արիւնը ծծել, ժողովրդին շահագործել։ Արդէն գանգատը ոսկորին է հասել, համբերութիւնը հատել է։ Գարձեալ քեալլաքեօղներ. մի կողմ դրէք ձեր կոպալները, և նշանակեցէք ժողովրդական օրինաւոր ընտրութիւն։ Թող ժողովուրդը գիտակցաբար ընտրէ իր համար կառավարիչներ։ Վերջապէս բաւական է. մարդ էք, իսան էք. մի փոքր ինքնասիրութիւն ունեցէք, յետ քաշուէք ասպարէզից։

Առ այժմ այսքան։

Սարիբիկ Տէր-Մելքիսեդեկեան

ՊԱՏԵՐԱԶՄ

(Վ. Հ. Գ.)

ՊԱՐԻԶ, 22 հոկտ.— Ռազմական հաղորդագրութիւն։ Սիրրի ճակատ. Ֆրանսացիք գերմանացիներին ստիպեցին նոր նահանջների դիմել։ Չնայած յամառ դիմադրութեան, Ֆրանսացիք վերցրին Շալենդրին և Գրանդլիուպը։ Ֆրանսական գիծը սկսում է Սիբրոյից մինչև Մորտիերա, անցնում է մինչև Ֆրաուդեմոնա-Կոխաբդիլլիա և այնուհետև դէպի հարաւ Ֆիւդ Ջրանցքով։ Աուստրիան գերմանացիք վերանորոգեցին իրենց յարձակումը Վուկիերից արևելք։ Նրանք ամենուրեք յետ են մղուած։ Չեխո-սլովակները, որոնք ֆրանսական զօրքերի հետ կռիւ էին մտել, նորից դրաւեցին Տերրոն գիւղը, որը ժամանակաւորապէս գտնուում էր թշնամու ձեռքին։ Էլզասում թշնամական մի ուժեղ զօրախումբ ջանում էր մօտենալ Տանից հիւսիս Ֆրանսական ամրութիւններից մէկի կենտրոնին։ (?) Այդ զօրախումբը յետ է մղուած։

Ամերիկեան պաշտօնական ռազմա-հաղորդագրութիւն —Հոկտեմբերի 22-ին։ Վերդենի ճակատում մենք պահեցինք ու ընդարձակեցինք մեր անցեալ օրերի ձեռք բերածը։ Յամառ հակայարձակումները մեր նոր դիրքերի վրայ «297» բարձրութեան և Բուա-դէ-Մասպի վրայ թշնամու համար մեծ կորուստներ բերին։ Ամենուրեք մեր դիրքերը անձեռնմխելի են։ Այնուհետև դէպի արևելք մեր զօրքերը վերցրին Բուա-դէ-Ֆոբէն և բռնեցին 75 գերի։ Վէվրէում մի ուժեղ առաջխաղացման ժամանակ մենք վերցրինք 26 գերի։

ԲԵՐԼԻՆ, 22 հոկտ.—Կրոնպրինց Ռուպրեխտի բանակ։ Լիսի և Շելդի մօտ հետևակային կռիւներ են։ Թշնամին շարունակ փորձում էր անցնել գետը փոքր և մեծ զօրախմբերով։ Կորարիկից հիւսիս-արևելք, տպա նրանից հարաւ-արևելք թշնամին յարձակուեց բրոնեվիկներով և մեծ ուժերով մեր դիրքերի դէմ։ Ամենուրեք նա մեծ կորուստներով յետ է մղուած։ Անգլիացիք գրաւեցին գնդացիր-

ներով Սեն-Անանդա եկեղեցական աշտարակը։ Սալեմի և Էլ-Կատոյի երկու կողմերում թշնամին չնորոգեց իր յարձակումները։ Դիշերային մանակի կռիվներում թշնամուն յաջողուեց տիրել Ամեանալի կալուածքներին։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

(Վ. Հ. Գ.)

Ռուսաստանի նոր կառավարությունը

Հաղորդած բաղիոյով Պետրովսկ։ Էնդելի, Ալիսաբ, Կրասնովոդսկ Կուենն Ասխաբադի միջոցով Թեհրանի միջոցով հաղորդելու համար, պատճէնը Ֆունդիկովին։

Սեպտեմբերի 23-ին պետական խորհրդակցությունը Ուֆայում ընտրել է ժամանակաւոր կառավարություն հետեւեալ հոգուց։ Նախագահ՝ Աւկսենտիև, անդամներ՝ Վոլոգոդսկիյ, Զայկովսկիյ, Ասարով, գլխաւոր հրամանատար՝ գեներալ Բոլդիրև։ Խորհուրդը նշանակել է Հիմնադիր Ժողովի բացման օրն յունուարի 1-ին։ Կառավարությունը խնդրում է պետական ծառայողներին յայտնել իրենց տեղերը։ Ռուսական դեսպանները, օրինակ Իտալիայում արդէն հաղորդակցություն ունեն Ուֆայի հետ։ Դաշնակից պետությունները ողջունում են մանանակաւոր կառավարությանը։ Ուֆա է եկել անգլիական յատուկ լիազօր Էլլիոտը։ Ես կաշխատեմ տեղեկացնել Ուֆան մեր դրությեան մասին Պարսկաստանում

Մինորսկիյ

Կրասնովոդսկ Կունին, հաղորդեցէք Էնդելի։ Համառուսական ժամանակաւոր կառավարության անդամների անձնափոխանորդներն են՝ Զենզինով, Արգունով, Սազոնիկով, Վինոգրադով և գեներալ Ալէքսէև, վերջինս վախճանուել է։ Հոկտեմբերի 10-ին կամաւորական զօրքերի հրամանատար է նշանակուած գեներալ Դենիկինը։ Ժամանակաւոր կառավարությունը ընտրուած է ամբողջ ժողովրդի կողմից միաձայն։ Մասնակցում էին և մահմեդականները։ Կառավարությունը պատասխանատու է Հիմնադիր Ժողովի առաջ։ Նա հրատարակել է դիմում ռուս ժողովրդին, որտեղ յայտարարուել է Ռուսաստանի ֆեդերատիւ կազմակերպության մասին։

Մինորսկիյ

Համառուսական Կենտր. Գ. կոմիտէի պրեսս-բիւրոյի հաղորդագրությունները։

Կիեւ, 21 հոկտեմբերի։— Ուկրայնայի և գերմանական շրջաններում սառնություն է առաջ եկել, օրինաստացիան փոխում է, դաշնակիցների առաջին իսկ յաջողությեան դէպքում կանցնեն նրանց կողմը։ Կիևում ի մի հաւաքուած սև հարիւրակայինները գործակցում են։ Դեռ յուլիս ամսին միապետականների համագումարում քննուում է խորհուրդ, որի մէջ մտել են՝ Բեզակը, Կոշուբէյը և Կատենինը։ Խորհուրդն Ուկրայնայում բռնիներ է կազմակերպում միացեալ Ռուսաստան վերստեղծելու համար, որի գլուխը պէտք է կանգնի Թագաւորը։ Խորհրդին կից կայ զինուորական բաժին, որի գլուխն են կանգնած Թագաւորի արքունակները՝ Կելլեր, Պալիցին և Կանտակուզէն։ Միապետական բլոկը միաժամանակ օգնում է գեներալներին ձախ տարրերի դէմ կռիւ մղելու գործում։ Աչքի ընկնող դեր են խաղում Զամիսլովսկին, Պելիկանը, Կոշուբէյը և գնդակահարուած Շչեգլովիտովի որդին։

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ, 18 հոկտ.—Կառավարության մէջ մտան հետեւեալ կազմակերպությունները՝ Կրիմ, Վինաւէր, Նարոդով և սոցիալիստ-յեղափոխական Ֆասսէ։

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐ, 19 հոկտեմբերի։—Մինիստրների կաբինետը կազմակերպում է նախկին բարձր աստիճանաւորներից։ Կուբանի զինուորական մինիստր է նշանակուած Լուկոմսկին, արտաքին գործոց՝ Սազոնով, ֆինանսների՝ Շեպով։

ՄՈՍԿՈՒԱ, 22 հոկտ.—Նոյամ աշխատանքներ են կատարուում զինուորական ճեմարանը բացելու համար։

Պրոլետարական յեղափոխության տարեդարձի առթիւ ենթադրուում է նոր տարեգրություն հիմնել։ Նոր դարաշրջանի սկիզբն է՝ հոկտեմբերի 25-ը, այսինքն՝ 1917 թ. նոյեմբերի 7-ը։

Գեներալ Սեմենով

Գեներալ Սեմենովը Դոնի շրջանի զօրքերի կառավարության կողմից նշանակուած է Վորոնեժի գեներալ-գուբերնատոր։

Դաշնակից պետությունների պահանջը

Դաշնակից պետությունների ներկայացուցիչները առաջարկել են Սիբիրի կառավարությանը՝ զինադադար անել գեներալ Գլեբինովի և Խորվատի զօրքերը։

Վերադարձ դեպի հին

Պետրոգրադի խորհուրդը կազմալուծում է տեղական բոլոր կոմիտէները, վերադառնալով նախկին կենտրոնացման սիստեմին։ Ոչ մի աւտոնոմիա չի ընդունուում։

Ռազմիկների աշխատաւորական արտելը

Կալուածատիրական ագարակներում կազմակերպուել են աշխատաւորական արտելներ, որոնք ժողովում են իրենց կազմի մէջ անտուններին և ուղղակներին։ Արտելներում տեղի է ունենում կանանց սոցիալիզացիա։

Մարկ Կրիֆցկու եւ Աշեւսկու ձերբակալումը

Մոսկուայում ձերբակալուած են վիպասան Մարկ Կրիֆցկին և ժուրնալիստ Պետր Աշեսկին, որոնք հրատարակում էին «Սովետպատֆոբմա» շաբաթաթերթը։

Բնակարաններից հեռացնելը

Մոսկուայից հաղորդում են, որ ոչ-աշխատաւոր տարրերի հեռացնելը իրենց բնակարաններից դեռ ևս շարունակւում է։ Կազմած ցուցակների համաձայն ամենայն օր հարիւրաւոր բնակիչներ դուրս են շպրտուում փողոց և նրանց բոլոր գոյքը ենթարկուում է ռեկուիզիցիայի։

Պատարագական գրքեր

Հաղորդում են, որ Կուբակի նահանգում տեղի են ունենում ժողովրդական ջարդուածներ սովի պատճառով։ Կուբակի խորհուրդի գործադիր կոմիտէն քաղաքը և գաւառը յայտարարել է պաշարողական դրության մէջ։

Կուբանի համալսարանը

Եկատերինոդարում բացուել է Կուբանի համալսարանը բժշկական բաժանմունքով։

Կամաւորական զօրքում

Եկատերինոդարի իրաւաբան Իւանովսկին նշանակուած է կամաւորական զօրքին կից հիմնուած յատուկ խորհրդի կազմի մէջ արդարադատական մասի վարիչ։

Վլադիկոֆկասիայի գաղթականները

Դեռ են եկել նախկին ժամանակաւոր կառավարության նախարարներ Գերբերգը, Մալեանտովիչը և Գուդզը։ Եկել են և շատ իրաւաբաններ, որոնց թւում՝ Բերնշտեյնը և Մանդելշտամը։

Գնուած ոսկի

«Правда»-ն հաղորդում է, որ Կազանում գնդապետ Մոլոտովի բնակարանում գտնուած է 40 պուդ ոսկի։ Ենթադրում են, որ այդ ոսկին մի մասն է այն ոսկու, որ չեխո-սլովակները կազանում խլել են բոլշեւիկներից։

Նոր սենատոր

Կիևի նախկին քաղաքագլուխ Դիակովը նշանակուած է վերժանի սենատի ընդհանուր խորհրդի սենատոր։

Զօրակոչ

Մոսկուայում վէնքի տակ են կոչւում բոլոր ֆելդֆեբելները, կոնդուկտորները և պրապորշչիկները՝ 35-ից մինչև 48 տարեկան հասակը։

Պոգրոմային կոչեր

Խորհուրդների թերթերը լի են հրէական պոգրոմների հրաւիրող կոչերով։ Նրանք պահանջում են ինքնադատ կատարել հրէական բուրժուազիայի վրայ, որը հրէայ աշխատաւորության վերաբերմամբ բռնել է թշնամական դիրք։

Հիւսիսային Կովկասում

Հիւսիսային Կովկասում մեծամասնականները գրաւել են Ռամանովսկի շէնքը (խուտոր)։ Կովկազկայա կայարանում նրանց կողմն են անցել զօրակոչուած երկու վաշտ գիւղացիներ։

«ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ»-ի խմբագրությունը շնորհակալություն ընդունում է ձրի կամ վարձատրությամբ Ռուսաստանի, Հիւսիսային Կովկասի, Բագուի և արտասահմանի թերթեր։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

(Վ. Հ. Գ.)

ԲԵՐԼԻՆ, 19 հոկտ.—«Ռէյտերի» գործակալությունը հաղորդում է, որ դաշնակիցները առաջարկել են Բոլգարիային հարաւային Դոբրուջան։ Մեծ յուզում է տիրում Ռումինիայում։

ԲԵՐԼԻՆ, 20 հոկտ.—Բուլգարիայի և Ռումինիայի միջև տեղի են ունենում բանակցություններ Դոբրուջայի մասին դաշնակիցների մասնակցությամբ։ Գերմանական իմպերիալիզմի կործանումն է։

ԲԵՐԼԻՆ, 20 հոկտ.—Գերմանական դեսպանը Վիեննայում հաղորդում է, որ ճնշուած տրամադրությունը այստեղ արդէն բարձրացել է։ Վիեննայում հանդարտուած են Վիլսոնի պաշտպանության մէջ և այս հանդարտում է աւստրո-գերմանական միության վերջ։ Տիսան հունգարական պարլամենտում ողջունում է Վիլսոնի պայմաններով առաջարկած հաշտությունը։

ԲԵՐԼԻՆ, 20 հոկտ.— Աւստրիական պատգամաւորության նիստում Բուրիանը յայտարարել է, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը անյաջող է և նրա ստեղծած սահմանները չեն կարող խաղաղություն տալ Եւրոպային։

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՎԻԼՍՈՆԻՆ

ԲԵՐԼԻՆ, 20 հոկտ.— Բնագիրը այն նոտայի, որ գերմանական կառավարությունը կիրակի երեկոյեան ուղարկել է Ամերիկայի Միացեալ Նահանգների կառավարության։ «Գերմանական կառավարությունը գրաւուած նահանգներից զօրքերի հեռացումն ընդունելով զեկավարում էր այն նկատառումով, որ հեռացման միջոցների կիրառումն և զինադադարի պայմանների մշակումն պէտք է յանձնուի զինուորական մասնագէտներին և թէ համաձայնության իբրև հիմն պիտի ծառայի ոյժերի յարաբերությունը ռազմաճակատներում, համաձայնությամբ ապահովուած։ Գերմանական կառավարությունը նախապէս առաջարկում է յարմար պայմաններ սահմանել մանրամասնությունները բարեկարգելու համար։ Գերմանական կառավարությունը հաւատում է, որ Միացեալ-Նահանգների նախագահը չի հաւանի ոչ մի պահանջ, որ չի համապատասխանի գերմանական ժողովրդի արժանապատվության և այն արդարության, որի հիման վրայ խաղաղությունն է հաստատուելու։ Գերմանական կառավարությունը պատասխանում է այն յանդիմանություններին, որոնք ուղղուած են գերմանական ցամաքային և ծովային զօրությունների և ընդհանրապէս գերմանական ժողովրդին, թէ կատարել են ապօրինի և անմարդասէր գործողություններ։ Սակրիֆիսները միշտ անհրաժեշտ են լինում նահանջի պաշտպանության համար և այս մտքով թոյլատրուում են միջազգային իրաւունքով։ Այնտեղ, որտեղ չարագործություններ տեղի կունենան, մեղաւորները պատժուելու են։ Գերմանական կառավարությունը հերքում է և այն, ընդհանրապէս թէ գերմանական նաւագնացարանները նաւերը կործանելիս դիտամբ ոչնչացնում են ապատարար նաւակներ մէջը նստած մարդկանցով հանդերձ։ Գերմանական կառավարությունը առաջարկում է այս բոլոր դիպուածներում հետաքրքրություն տալ չէզոք յանձնաժողովներին քննել գործի հանգամանքները։ Որպէսզի հեռացուի այն ամենը, որ կարող է դժուարացնել հաշտության գործի յաջողությունը, գերմանական կառավարութ. հրաման է արձակել ջրասոյզ նաւակների հրամանատարների անուամբ, որով արգելւում է մարդատար նաւերին ակամ ձգելը, սակայն չի կարելի երաշխաւոր լինել տեխնիկական պատճառներով, որ այս հրամանը կը հասնի բոլոր ընդծովեայ նաւակներին նախ քան կը վերադառնային իրենց բազան։ Հաշտություն կայացնելու հիմնական պայմանն է, ընդգծում է նախագահը, ամենամի կառավարության հեռացումն, որ կրթնում է կամայականության վրայ. այդպիսի կառավարությունը միայով անկանորոշ, ըստ իր հայեցողության կարող է քանդել միջազգային հաշտությունը։ Սրան գերմանական կառավարությունը պատասխանում է հետեւեալը. Գերմանիայի կայսրության մինչև այժմ կառավարության կազմի վրայ ոչ մի ազդեցություն չէր ունենում ժողովրդական ներկայացուցչությունը։ Կոնստիտուցիան չէր նախատեսել ժողովրդական ներկայացուցչության աշխատակցությունը պատերազմի և հաշտության հարցերը վճռելու ժամանակ։ Այս սահմանում տեղի ունեցաւ հիմնական փոփոխություն։ Նոր կառավարությունը կազմուել է ժողովրդական ներկայացուցչության ցանկությեան համաձայն, որ ընտրուած է ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քուէարկության ընտրական իրաւունքի հիման վրայ։ Ռեյխստագի մեծ կուսակցությունների վերաբերմամբ մշտապէս կառավարությունը [illegible] Նոյնպէս ապագայում ոչ մի կառավարություն չի [illegible] կամ շարունակել իր գոյությունը, եթէ չունենայ ռեյխստագի վստահությունը վայելած։ Ռեյխ-կանցլերի պատասխանատուությունը ժողովրդական ներկայացուցչության առաջ սահմանւում և ապահովւում է օրէնքներով։ Նոր գերմանական կառավարության առաջին քայլը հանդիսանում է այն օրէնքի առաջարկությունը, որով կոնստիտուցիան այն կերպ է փոփոխւում, որ պատերազմի և հաշտության հարցերում անհրաժեշտ է ժողովրդ. ներկայացուցչության համաձայնությունը։ Նոր սիստեմ յարատևության ապահովությունը հիմնուած է ոչ միայն օրէնքների, այլ և գերման ժողովրդի անդրդուելի յանկության վրայ, որը ճնշող մեծամասնությամբ պաշտպան է կանգնած այս բարենորոգումների և պահանջում է նրանց եռանդուն ընդարձակումն։ Նախագահի և նրա հետ դաշնակցած պետությունների այն հարցին, թէ ում հետ ունեն գործը, սրանով, ուրեմն, տալուս է պարզ և անկեղծի պատասխան, որ հաշտության և զինադադարի առաջարկությունը բխում է այն կառավարությունից, որ ազատ է կամածին գործելակերպից անպատասխանատուությունից գերման ժողովրդի ճնշող մեծամասնության համաձայնությամբ։ Բերլին, 20 հոկտ. 1918 թ. Սոլֆ, արտաքին գործոց մինիստրության քարտուղար։*

Ֆրանսիական սոցիալիստական կուսակցության մէջ

Սոցիալ-դեմոկրատական «Борьба»-ն հաղորդում է. Կուսակցության անդամների թիւը 1913 թ. հաւասար էր 70,000, այժմ ընկել է մինչև 38 հազարը։

ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՈՐԾԱՆԻՔ ՄՏԱՅՆՈՒԹԻՆ

Հայաստանի Հանրապետության ներքին կեանքը քանի գնում աւելի և աւելի բարդանում է և խճճւում։ Քաջազնունու կառավարությունը, որ իրապէս ներկայացնում է Արամի դիկտատուրան, աղբիւր դառաւ մեր երկրի ծայր անիշխանության։ Եթէ Ղըզիլ-Բուլաղի շրջանի գիւղերում դեղերտիրները թև առած սպանություններ են կատարում, եթէ մեր մի զոյգ խճուղիները դուրկ են որևէ պահակներից, չնայած որ դեռ կանգուն են ռուսական տիրապետությունից մնացած «փոդի» և «սարժա»-ների հոյակապ շէնքերը Աբարանի և Դիլիջանի խճուղիների վրայ, և այդ պատճառով էլ նորակազմ խմբեր՝ կազմուած զաղթականներից և դասալիք զինուորներից, անպատիժ կերպով թալանում և մերկացնում են ճանապարհորդներին, եթէ ժողովրդի մէջ աւելի խորանում է կասկածամտությունը, ապահովությունը, զոհունակությունն ու ամբարոյականությունը,— այս բոլորի սկզբնապատճառը—յիշուած բոլոր բացասական կողմերով օժտուած ներկայ կառավարությունն է...

Փաստ էր և կոնկրետ օրինակներ բերելը կը լինի պարապ ժամանց, որովհետև ներկայ կառավարության պատասխանատուները կազմող դաշնակցականներն իսկ մի կողմից սկսել են անհանգստության նշաններ ցոյց տալ, և պարլամենտի վերջին նիստին մինչև իսկ դաշնակցական ֆրակցիան հարցապնդումներ ուղղեց Արամին և Քաջազնունուն՝ կատարուած գեղծումների և ձեռք առնուած միջոցների մասին...

Բայց... որքան դժուար է մարդ-

կանց ճանաչել և որքան հեշտ է նրանց դնահատել... դաշնակցականները, Հանրապետութեան ներքին ժխորի հանդէպ, կօալիցիայի խնդիրը մէջ տեղ դցելով, որպէսզի զրաղեցնեն օպոզիցիան, իրանք այդ խաղի միաժամանակ չեն հրաժարւում իրենց կործանիչ մասայնութիւնից... կործանիչ թէ իրենց կուսակցութեան համար, բայց աւելի ևս կործանիչ հայ ժողովրդի համար։ Թէ իրենց պաշտօնական օրգան «Զանգի», և թէ պարլամենտական ֆրակցիայի ճառերի միջոցով նրանք, խրախուսուած Քարվանսարայի շրջանի զեմստուային ապօրինի գումարուած ժողովի դաշնակցականութեամբ, իրենց ամբարտաւանութեամբ ապտնական յոխորտանքներ են ուղղում պարլամենտի հացէին և, ինչպէս պարզուեց երէկուայ ժողովում, գազանի ժողովներ են անում պարլամենտը ցրելու և դիկտատուրա յայտարարելու։ Թէև ձախ-դաշնակցականները ժխտեցին այդ իրողութիւնը, բայց աչքերը լուռ մնացին. նրանք ի հարկէ արդարացումներ կը գտնեն իրենց խելառ ժողովութեան համար՝ «անցողական շրջան է, բացառիկ պայմաններ են—և այդ միջոցներն անհրաժեշտ են»...

Մենք կործանիչ ենք համարում և կորստաբեր այդ մտայնութիւնը։

Դաշնակցութիւնը պէտք է վերջնականապէս զուրկ լինի քաղաքական հոտառութիւնից և ժողովրդի տրամադրութեան անդիտակ պէտք է լինի, որպէսզի համարձակուի այդպիսի մի օրհասական քայլ տալ... Փոյթ չէ, թէ դա ճակատագրական նշանակութիւն կարող է ունենալ ներկայիս «քաղաքագէտների» համար, բայց ամենակարևորն այն է, որ ժողովրդի բազդի հետ են խաղում և գալիք օրերը աւելի արիւնոտ և ծանր են դարձնում...

Մենք համոզուած ենք, որ ներկայ պարլամենտը մի խոտորան է միայն, մենք համոզուած ենք նոյնպէս, որ կուսակցութիւնների ներկայ փոխ-յարաբերութիւնները չեն համապատասխանում իրականութեան. այդ պէտք է որ պարզ լինի աչք և ականջ ունեցողների համար։

Սակայն այդ բոլորից յետոյ մենք նոյնպէս համոզուած ենք, որ ներկայ պարլամենտն է, որ այսպէս թէ այնպէս հնարաւոր է դարձնում երկրի մէջ նուազագոյն հաւասարակշռութեան. ժողովուրդը համբերում է, տոկում է և սպասում միայն այն յուսով, որ «ճորոնուրդը» մոտենում է իր մասին։

Հեռու մնացէք նոր արկածներից.

Դ. Տեր-Ռուբէնեան

Երևան.

ՀԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Թէպէտև Երևանում եղած ժամանակ իմ ծանօթներից և անծանօթներից շատ վրդովեցուցիչ և միանգամայն անպատուաբեր պատմութիւններ էի լսել Մանուկ Հայաստան աշխարհում հայ պաշտօնեաների կաշառակերութեան մասին, բայց հաւատ չէի ընծայում այդ բոլորին, քանի որ ոչ աչքովս էի տեսել և ոչ էլ ինձ հետ էր պատահել։

Այսօր ցաւ ի սիրտ պիտի արձանագրեմ, որ իմ կասկածներս յօգուտ ցնդեցին, երբ վերադարձիս հայ պաշտօնեաները կորզեցին մի կլորիկ գումար՝ Թիւրքական «բաշիշ» անուան տակ։

Բանը նրանումն է, որ Հայաստանի ներքին գործոց մինիստր պ. Աբրամի առորագրութեամբ երեք լիազօրներիս հետ առացանք վկայագիր (удостовѣреніе)՝ անարգել կերպով Թիֆլիս դալու համար, վճարելով իւրաքանչիւրս սահմանուած 5 ռուբլի։

Դիլիջան հասնելուն պէս մենք կարք վարձեցինք՝ միւս առաւօտեան ժամը 4—5-ին այնտեղից մեկնելու Աղստաֆա կայարանը։

Մեկ առացին, որ մեր վկայագիրը պէտք է ներկայացնենք Դիլիջանի զեմստուային վարչութեանը՝ պատշաճ. մակագրութիւն ստանալու համար նրանց վրայ։ Ներկայացրինք ուր հարկն է։ Բացի մեզանից այնտեղ կային շատ ուրիշ ճամբորդներ, որոնց վկայագրերի վրայ նոյնպէս երկու, այո, միայն երկու տող քան պիտի գրուէր։ Նրանք շտապել ստացել էին, վասն զի վարչութեան (ուպրաւայի) տարին ծառայողները յայտնել էին նրանց, որ կարող են յետ տանուել վկայականները ոչ վաղ քան հետևեալ օրուայ կէսօրին, մինչդեռ խեղճերը չէին կարող սպասել երկար ժամանակ։ Մենք էլ նոյն վիճակի մէջ էինք։

Սկսուեցին բանակցութիւնները, որոնց հետևանքը եղաւ այն, որ խոստացան ծառայողները տարադրել տալ իրենց մեծաւորին նոյն երեկոյին, եթէ տան «բաշիշ» լինի իւրաքանչիւրին։

Ակամայ ամենքս էլ համաձայնուեցինք և մի ժամից յետոյ տացանք մեր վկայագրերը, որոնք աւելի թանդ նստեցին մեր վրայ, քան Հայաստանի Հանրապետութեան օրէնքով սահմանուած է։

Հրաւիրում ենք ում անկն է ուշադրութիւնը այս նոր տեսակ թալանչութեան վրայ։ Ի հարկին կը ներկայացնեմ ապացոյցներ։

Հմ. Դիմոֆեեան

ԱԴՐԲԷՋԱՆ

ՇՈՒՇԻՆ

Շուշուց անփորձ տեղս է հասել մի ապայ, որը և պատմում է տեսնելը։

Երբ արդէն յայտնի էր, որ տաճկական և Ադրբէջանի միացեալ զօրքերը մտնում են քաղաք՝ քնակիչները սկսեցին քաղաքի բոլոր թաղամասերը զարդարել դրդերով, մի առանձին ջերմեռանդութիւն էր ստացել հայկական թաղը, որը աչքի էր ընկնում իր դոյնզդոյն զորդերով։

Հայերը երաժշտախմբերով և աղու հացով ընդառաջ են գնում զօրքին հանդիսաւոր կերպով դիմաւորելու։

Զօրքը ամենայն լրջութեամբ մտնում է քաղաք։

Հայերի թիւը փողոցներում կամաց-կամաց նուազում է և երեկոյեան դէմ փողոցները բոլորովին դատարկւում են։

Հայոց թաղը սկսում է ապրել ահռելի՛ման օրեր, չնայած նրան, որ ոչ մի բռնութիւն և կողոպուտ տեղի չէ ունենում։

Զալիլ բէյի առաջին գործերից մէկն է լինում այցելել հայոց եկեղեցին։

Այնուհետև երբ մութը պատում է քաղաքին, սկսում են ձերբակալութիւնները։

Նախ քան ձերբակալութեան դիմելը նրանք հենց մի քանի հայերից ստանում են մի ցուցակ, որի համաձայն սկսում է ձերբակալութիւն և բերդարգելութիւն։ Ձերբակալուածների ցուցակը մենք արդէն նախորդ համարներից մէկում տուել ենք։

Շնորհիւ նման զրպարտութեան ձերբակալուած են շատ անմեղ և խաղաղասէր մարդիկ, որոնք ոչ մի առնչութիւն ու կապ չեն ունեցել քաղաքի և շրջանի դէպքերի թէ ներքին և թէ արտաքին գործերի հետ։

Շատերը դիմել են փախուստի։ Բաղուի դէպքերի թաւորութիւն կրող դէպքերի յուշ անգամ չէ երևացել առայժմ։

Սկսել են կարդի բերել պոստը, հեռագրատունը և միւս հիմնարկութիւնները։ Կողոպտուած է միմիայն տեղի ռէալական դպրոցի գրադարանը և ֆիզիքական կաբինետը։

Քաղաքի ներքին կեանքի մէջ մտցնում են օրինակելի կարգ ու կանոն։

«Բաղարը» նոր կեանք է ստանում։

Շուկայ են դուրս բերում բոլոր այն կենսամթերքները, որոնք մինչև այդ թաքցրուած էին իրենց ամուր շտեմարաններում։

Կենսամթերքների առատութիւնը գնները զգալի կերպով իջնում են, օր. մինչև զօրքը մտնելը նաֆթի գրուանքան ծախւում էր 5 ռուբլի, հացի գրուանքան 1 ռ. 50 կ., խաղողի գրուանքան 2 ռ.—2 ռ. 50 կ., իսկ զօրքը մտնելուց յետոյ նաֆթի գինը իջաւ 2 ռուբ., հացի գինը 1 ռ., խաղողի գինը մինչև 50 կ.։

Շուշում, համեմատած միւս քաղաքների հետ, շատ կենսամթերքներ կան, միայն փող կամ նրան փոխարինող թղթադրամ չկայ։

—

Լիթֆալի բէկ Բեքութովը սպանուել է Աղդամի մօտ. ենթադրում են, որ թիւրքերը սպանած կը լինեն։

Հանդուցեալի դիակը նոյն իսկ չի գտնուում։

—

Ադրբէջանի իշխանութիւնը չեն ճանաչում Զանգեզուրի հետևեալ գիւղերը. Հադրութ, Թաղավարդ, Տող և մի քանի ուրիշ գիւղեր։

Անդրանիկը այժմ գտնուում է Զանգեզուրում։

Զալիլ բէյը յայտնել է հայերին, [illegible] թէ ինքը և թէ Տաճիկ կառաւարութիւնը ոչ մի գործ չունեն [illegible] հետ, միայն պահանջում [illegible], որ Անդրանիկը զինաթափուի, և իրենք պատուաւոր պաշտպանութիւն կը տան նրան թուով տասնեակ մարդ, որ նա Կովկասից դուրս գայ և գնայ Ռուսաստանի խորքերը։

Աբգար

ՎՐԱՍՏԱՆ

ԲՈՂՈՔ ԲԱԳՈՒԻ ԿԱՏՈՐԱԾԻ ԴԷՄ

«Борьба»-ն հաղորդում, է որ վրաց պարլամենտի նախագահի և հայ պատգամաւորների անունով Բորժոմից ստացուել է հետևեալ հեռագիրը. «Բորժոմի շրջանի ժողովրդական լուսաւորիչները յայտնում են իրենց խորին վշտի զգացմունքը Բաքուում տեղի ունեցած հայկական կոտորածի ասիթիւ, իրենց զայրոյթը տաճկական հրոսակախմբերի արիւնոտ գործի դէմ և ցաւակցութիւնը հայ դեմոկրատիային, որին վիճակուած էր այսպիսի մի անկարագրելի դժբախտութիւն»։

Նախագահ՝ Գր. Ուրուսաձե։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱ

Հոկտեմբերի 21-ի նիստը

Բաղաքապետը տալիս է բացատրութիւններ Մանթաշեանի պատժի մասին կատարուած միջադէպի։ Պարզուում է, որ քննիչը, որը պատրաստ էր ընդունել սուբ կերպարանք, առաջացել է մի չնչին պատճառից։

Բաքուցին միլիցիապետին յայտնել էին, որ Մանթաշեանի պատժի այն գէնքից, որտեղ պահուած են Հայկական Հանրապետութեան գէնքերը, լսում են ինչ-որ մարդու հառաչներ և օգնութիւն խնդրող ձայներ։ Միլիցիապետը մի խումբ միլիցիոներների հետ գալիս է, ցանկանալով մտնել ներս, բայց հայկական պահակը թոյլ չի տալիս նրան կատարել այդ։ Դրա հետևանքն այն էր որ սաստիկուած էին խառնուել գործի մէջ և վրաց կառավարութեան բարձր իշխանութիւնը, Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչը, քաղաքագլուխը հայն։ Բոլոր այս անձինք ժողովեցին միջադէպի տեղում, և այնտեղ պարզուեց, որ հայկական պահակը իսկապէս իրաւունք ունէր չթողնել միլիցիային յիշեալ շէնքը մտնել, որովհետև կանխօրէն պ. Զամալեանի և Վրաստանի ներքին գործոց նախարարի միջև կայացած էր համաձայնութիւն, որով ոչ ոք առանց Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչի թոյլտուութեան իրաւունք չունի մտնել այդ շէնքը։ Միլիցիապետը այդ համաձայնութեան մասին տեղեակ չէր։ Բացի այդ նա եկել էր ոչ թէ խուզարկութիւն կատարելու, այլ օգնութիւն տալու այն մարդուն, որի ձայնը լսում էր։

Այդ անյայտը՝ նախկին հայ զինուոր մի ոմն Կարապետեան էր, որը կողոպտել էր իր ընկերներին, այնուհետև Սեխարուլիձէ անուան տակ ծառայել էր վրաց զօրքերում, որտեղ նոյնպէս գողութիւն էր արել։

Հայկական պահակը բանելով Կարապետեանին վճռել էր նրան պատժել և նա այդ պատճառով ազմուկ էր բարձրացրել։ Երբ միջադէպի տեղը եկան բարձր իշխանութեան ներկայացուցիչներ, մեղաւորն արդէն անյայտացել էր։ Հայ զինուորներն ասում էին, որ նրան տարան միլիցիոներները, իսկ վերջիններս յայտնում էին, որ հայերն են տարել։ Բայց խուզարկութիւնը ցոյց տուեց, որ նա պատուհանը կոտրելով մտել էր հարևան սենեակը և այնտեղ պահուել։

Այսպիսով միջադէպը վերջացաւ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Կաչուխովը. Հաւատի աղբիւրներից հաղորդում են, որ ներքին գործերի մինիստրութեան դրասենեակապետ Կաչուխովը թողնում է իր պաշտօնը։

◆ Վրացերէնը բանակում. Վրաց զինուորական նախարարը հրամանագիր է, որ բոլոր իրեն ենթակայ և բոլոր զօրամասերի վարչութիւններում սկսուեն նախապատրաստական աշխատանքները վրացերէն լեզուով անցնելու համար և նոյն վարչութիւններում ու զօրամասերում պիտի նշանակուեն վրաց լեզուին հմուտ պետեր։ Վրացերէն լեզուով արդէն հրատարակուած է մի քանի կանոններ։

◆ Շախպուհեանի յիշատակին. — Բաղաքային դուման իր վերջին նիստում նախագահ Լոմսատիձէի առաջարկութեամբ յոանկայս յարգոց հանդուցեալ Աւետիք Շախպուհեանի յիշատակը և որոշեց ցաւ յայտնել հայ հասարակութեանը նրա վաղաժամ մահուան առիթով։

◆ Վրաստանի պարլամենտում. — Վրաստանի պարլամենտի իրաւաբանական յանձնաժողովում այժմ մշակուում են օրինագծեր պետական կոնտրոլի շտատների, Վրաստանում երդուեալ պատուրների պատասխան հաստատելու և Բաթումի ու Աբալցխայի հաշտարար բժշկանոցները և Զաքաթալայի հաշտարար դատարանի վերացման մասին։

◆ Բաղաքային ծառայողներ. — Բաղաքային ծառայողները դեռևս օգոստոս ամսից ռոճիկ չստանալու պատճառով ընկել են շատ ծանր կացութեան մէջ։ Ծառայողների մէջ տեղի են ունեցել և շարունակւում են անբաւականութիւններ, ուստի մի պահանջ են յարուցում իրենց գործադիր կոմիտէին, որը դիմում է քաղաքային վարչութեան, որ եթէ մինչև հոկտեմբերի 25-ը ծառայողներին չտրուեն օգոստոս և սեպտեմբեր ամիսների ռոճիկները, գործադիր կոմիտէն վերցնում է իրենից միանգամայն բոլոր պատասխանատուութիւնը հետևանքների համար.

◆ Խորհրդակցութիւն. — Վրաց կառավարութիւնը յայտնել է, որ մօտ օրերս խորհրդակցութիւն կը լինի Հայաստանի, Վրաստանի և Ադրբէջանի երկաթուղային դծերի և հաղորդակցութեան մասին։

◆ Օզուրգէթից. — Օզուրգէթից դիմել են վրաց կառավարութեան և խնդրել ցանքի համար հացահատիկներ։ Կառավարութիւնը որոշել է բաւարարել այս դիմումը։

◆ Ճաճ. հաղորդ. մինիստր. — Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը դիմել է կառավարութեան, որ զեմստուական ճանապարհները դնի իր տրամադրութեան տակ։

◆ Հպատակութեան օրէնք. — Այժմ վրաց կառավարութիւնը զբաղուած է հպատակութեան օրէնքի մշակման խնդրով, թողնելով հպատակութիւն ընտրելու խնդիրը քաղաքացիների ազատ հայեցողութեան։

◆ Գազբ. յանձնաժողով. — Գազթականական յանձնաժողովը Բակուրիան է ուղարկել եօթանասուն հազար ռուբլի և 3-րդ վերստականը քսան հազար ռուբլի գաղթականների պէտքերը հոգալու համար։

◆ Ներկայացում. — Հինգշաբթի, հոկտ. 24-ին Աբրահամեան Ընկերութեան թատրոնում, հայ դրամատիկ դերասանական միութեան նախաձեռնութեամբ կը ներկայացուի Ե. Գորդէնի յայտնի «Ոսկեանոսից դէնը» դրամա։

ԱՅՍՕՐ

Երեկոյեան ժամի 5-ին, Աբամեանի տանը կը կայանայ Հայրենակից. Միութիւնների կենտրոնական խորհրդի նիստը։

Խմբագրական Կոլէգիա
Հրատարակիչ՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւն

ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ“-Ի
դրասենեակում վաճառւում է նրա հրատարակութեամբ լոյս տեսած
ԳԷՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
ԶԵՄՍՏՒՈՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
ԳԻՐՔԸ
Դիմաց 50 կոպէկ։
Դիմել դրասենեակ՝ Головинскій пр. № 25. 10—1

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ“-Ի
ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
ԼՈԳՐԱՎԱՃԱՌՆԵՐ
5—2 ԴՐԱՄԵՆԵԱԿ

Թիֆլիս, Տպարան Վրաց Տպագրական Ընկ.